

ՀՊՃՀ 15 Կապանի մասնաճյուղը տարեկան է

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
2003 թ.
ՆՈՎԱԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ԳԻՍՏԱԿՐՈՒՄ ԵՎ ԳՐԱՄԱՐԿՈՒՄ «ՍՊՈՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՆ ԱՐԽԱՆԱԾՈՒՄ ԿԱՏԱՆՈՒՄ»
ՀԱՍԵՆ ք. ԿԱՊԱՆ, ԱՐԽԱՆԱՅԻՆ 20/32
Հեռ.ՆԱԽԱՐՀ (0285) 5 25 63 (091) 45 90 47 (077) 06 28 02
Էլ. Կապան www.syuniacyerkir.am
Էլ. փոստ syuniacyerkir@mail.ru

ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղը

Կազմավորումը

ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ) կրթահամալիրը (2002 թվականից՝ մասնաճյուղ) կազմավորվել է 1996թ. հոկտեմբերին՝ ԵրՊԻ-ի հեռակա ուսուցման ֆակուլտետից կից 1984թ. ստեղծված Կապանի ուսումնախորհրդատվական կետի (ՈւՆԿ) հիմքի վրա: Նրա վարիչն էր ԵրՊԻ-ի հաշվողական տեխնիկայի ամբիոնի ղեկավար, տ.գ.թ. Ա.Անտոնյանը, ով պաշտոնավարել է մինչև 1997թ.: Մասնաճյուղն իրավաբանական գործունեություն է ծավալել 1997թ. ապրիլի 3-ից:

ՀՊՃՀ Կապանի ՈւՆԿ-ն, որը գործում էր Կապանի գիշերօթիկ դպրոցի մասնաճյուղում, 1996/97 ուստարում ուներ 13 հիմնական դասախոս (2-ը գիտ. թեկնածու) և 2 մասնագիտությամբ 125 ուսանող, ովքեր հիմնարար կրթություն ստանալուց հետո 3-րդ կուրսից ուսումնառությունը շարունակում էին Երեւանի կրթահամալիրի համապատասխան դեպարտամենտներում:

ՈւՆԿ-ն ներառում էր ֆիզիկայի, քիմիայի, էլեկտրատեխնիկայի լաբորատորիաներ, որոնց սարքավորումները բարոյապես արդեն հնացած էին: Կրթահամալիրի կազմավորումը և զարգացումն ընթացել է ՀՊՃՀ նախկին ղեկավարների պրոֆ. Յու.Սարգսյանի և Ու.Մարուխյանի անմիջական ղեկավարությամբ:

1997թ. հունվարին կրթահամալիրի տնօրենի պաշտոնակատար է նշանակվել ՀՊՃՀ «ԱՊՏԱԷ» ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Հոմեր Աբրահամյանը, ով պաշտոնավարել է մինչև 1997թ. ապրիլի 24-ը: 1997թ. մայիսին կրթահամալիրի տնօրենի պաշտոնակատար է նշանակվել ՀՊՃՀ ԶԳ և Ի դեպարտամենտի ԱԿՀ ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Սեյրան Բալասանյանը:

Կրթահամալիրը տեղաբաշխվել է Կապանի նախկին ճարտարագիտատնտեսագիտական քոլեջի 7200քմ ընդհանուր մակերեսով մասնաճյուղում և զբաղեցնում է 28800քմ հողատարածք:

2002թ. նոյեմբերին ՀՊՃՀ Կապանի կրթահամալիրը վերակազմակերպվել է «ՀՊՃՀ» ՊՈԱԿ-ի Կապանի մասնաճյուղի: 2003թ. հուլիսին մասնաճյուղի տնօրեն է ընտրվել տ.գ.թ., դոցենտ Ս.Բալասանյանը, ով այդ պաշտոնում վերընտրվել է 2008թ. նոյեմբերին:

Այսօրը

ՀՊՃՀ-ից ստանալով կադրային և մեթոդական օգնություն, իսկ Ջանգեզուրի ՊՄԿ-ից՝ ֆինանսական աջակցություն՝ մասնաճյուղն առաջանցիկ զարգացում է ապրել:

Մասնաճյուղի կազմում այսօր գործում են ընդհանուր ճարտարագիտական և մասնագիտական ճարտարագիտական կրթության ֆակուլտետներ, որոնք ներառում են 4 ամբիոն և Երեւանի կրթահամալիրի մեկ ամբիոնի մասնաճյուղ:

Մասնաճյուղն իրականացնում է ճարտարագիտության բակալավրի կրթական ծրագրով ճարտարագետների պատրաստում 8 մասնագիտության և մասնագիտացման գծով: Մասնաճյուղում այսօր սովորում է 407 ուսանող (189-ը՝ հեռակա), այդ թվում 318-ը՝ վճարովի, 61 ուսանողի ուսումնառությունն ընդհատված է ազգային բանակ գորակոչվելու պատճառով: 2011/12 ուստարում մասնաճյուղն ընդունելություն կատարեց (16 ուսանող) միջին մասնագիտական կրթական ծրագրով՝ «Օգտակար համաժողովրդի հարստացում» և «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտություններով:

Մասնաճյուղի դասախոսական կազմը ներառում է 37 դասախոս, որից 34-ը՝ հիմնական:

Մասնաճյուղում գործում են գրադարան, մարզադահլիճ, 2 քոմպիյութերային լաբորատորիա, հեռավար ուսուցման և տեխնոլոգիական կարողությամբ լսարաններ, մետալուրգիայի և նյութագիտության, ֆիզիկայի, քիմիայի, էլեկտրոնային տեխնոլոգիայի և ֆիզիկայի լաբորատորիաներ: **Շարունակությունը՝ էջ 6**



ՍԵՅՐԱՆ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ. «Սովորելու համար հնարավոր բոլոր պայմանները կան մեր մասնաճյուղում...»

«Այունյաց երկիր» թերթի հարցերին պատասխանում է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) Կապանի մասնաճյուղի տնօրեն, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Սեյրան Բալասանյանը

Պարոն Բալասանյան, 2011թ. հանրակրթական դպրոցների շրջանավարտ չովեցին, և, բնականաբար, միջին մասնագիտական ու բարձրագույն ուսումնական հաստատությունները խնդիրներ ունեցան ուսանողական համակազմի համալրման հարցում: Չեր մասնաճյուղը կարողացավ դիմակայել այդ փորձությանը:

Մենք դրան նախապատրաստվել սկսեցինք դեռ 2008 թվականից: Ցավոք, այդ դժվարությունները հնարավոր եղան հաղթահարել որոշ ծախսերի, դրույքների կրճատման միջոցով, որի արդյունքում, անգամ առկա ուսուցմամբ դիմորդների բացակայության պարագայում, 2011թ. ունեցանք 19 սննդ դրամ շահույթ: 2011թ. ունեցանք 78 դիմորդ, որոնցից հեռակա ուսուցմամբ բուհ ընդունվեց 52-ը, իսկ առկա ուսուցմամբ՝ 7 դիմորդ, որոնցից մեկն

ընդունվեց, ում էլ տեղափոխեցինք հեռակա ուսուցման բաժին: Սա այն դեպքում, երբ 2010թ. առկա և հեռակա բաժիններ ընդունվել է 110 դիմորդ:

– Հավանաբար նշված շահույթը գոյացավ կադրերի կրճատման արդյունքում, այո՞:

– 2011-12 ուսումնական տարում ոչ մի դասախոս չի կրճատվել, պարզապես ուսումնական բեռնվածքներն են կրճատվել: Այսպես՝ որոշ պաշտոնների մեկ դրույքը դարձրել ենք 0.75, 0.75-ը՝ 0.5... Այսօր որակյալ դասախոսներ ունենալը գերխնդիր է: Եվ, բնականաբար, հնարավորինս խուսափեցինք կրճատումներից:

– Քանի՞ ուսանող ունեք ներկա դրությամբ, և հույս ունե՞ք, որ ավարտելուց հետո իրենց մասնագիտությամբ աշխատանք կգտնեն:

– Մասնաճյուղում այսօր սովորողների թվաքանակը՝ էջ 7



ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղը

Սկիզբը՝ էջ 5

րատեխնիկայի, սխեմատեխնիկայի, շինարարության լաբորատորիաներ, վիրտուալ լաբորատորիա, արտադրական կապերի եւ ուսանողների առաջխաղացման ջանքերն են կենտրոնում, միջոցառումների դասիկն, հասարակական սննդի օբյեկտ:

Մասնաճյուղի մասնաճյուղերը փուլային կարգով վերանորոգվում են «ՁՊՄԿ» ՓԲԸ-ի միջոցներով: 2007թ. ավարտվել է գլխավոր մասնաճյուղի հիմնանորոգումը, որը ստացել է բուհին վայել կառույցի տեսք: Սեփական միջոցներով նորոգվում է մասնաճյուղի գրադարանի մասնաճյուղը, բարեկարգվում են մասնաճյուղի հարակից տարածքները: Լեռնամետալուրգիական մասնագիտությունների ուսանողների արտադրական պրակտիկան եւ լաբորատոր պարապմունքների մի մասը բարձր արդյունավետությամբ իրականացվում են «ՁՊՄԿ» ՓԲ ընկերություններում:


Արագորեն զարգանում է մասնաճյուղի ինֆորմացիոն ենթակառուցվածքը, որը ներառում է ժամանակակից 53 քոմպյուտեր: Դրանց զգալի մասը ռադիոնոդեմային կապով միացված է ինտերնետին: Մասնաճյուղի ամբողջ տարածքում գործում է անլար, WiFi տեխնոլոգիայով

գործող անվճար ինտերնետային կապի համակարգը:

Մասնաճյուղն էական դերակատարում է ունեցել Սյունիքի մարզում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հույժ կարեւոր գործուն: Մասնաճյուղը մարզում ինտերնետի առաջին բաժանորդն էր եւ զգալի աշխատանք է կատարել մարզում քոմպյուտերային գրագիտության տարածման եւ ինտերնետային կապի զարգացման ուղղությամբ:

Գործունեությունը 1997-2012թթ., ամիսի ցուցանիշներ.

- 2009թ. քառապատկվել էր ուսանողական համակազմի թվաքանակը (485) (այն հայտնի պատճառներով ժամանակավորապես նվազել է մինչև 407) եւ մասնագիտությունների անվաճանցանը (8):
- Ուսման առաջադիմության միջին տարեկան ցուցանիշը 55%-ից հասել է 91%-ի:
- Եռապատկվել է գերազանց եւ հարվածային սովորող ուսանողների տոկոսը (34%):
- Հնգապատկվել է մասնաճյուղի արտաբյուջետային միջոցների ծավալը (85 մլն դրամ):
- 2009թ. տասնապատկվել է դասախոսական կազմի միջին



Մասնաճյուղի դասախոսական կազմի աշխատավարձի դինամիկան (հազ. դրամ) 1997-2012թթ.

աշխատավարձը՝ հավասարվելով Երեւանի կրթահամալիրի դասախոսական կազմի միջին աշխատավարձին, իսկ 2012թ. հունվարից 15 %-ով գերազանցել է այն:

- Մասնաճյուղը տվել է 1078 շրջանավարտ, որից 60-ն ավարտել է մագիստրատուրան, իսկ 7-ը՝ ասպիրանտուրան (2 գիտ. թեկնածու եւ 4 մագիստրոս աշխատում են մասնաճյուղում):
- Եռապատկվել է դասախոսական համակազմի թվաքանակը (37)

եւ փոխվել գիտական աստիճան, կոչվում ունեցող դասախոսների հաշվեկշիռը (32%):

- Հրատարակվել են 13 ուսումնական ձեռնարկ, մեկ միջբուհական դասագիրք եւ 107 մեթոդական ցուցումներ, մշակվել եւ վերանայվել են 6 ուսումնական պլան եւ 45 առարկայական ծրագիր:
- Իրականացվել է 1 ֆինանսավորվող (դրամաշնորհային) եւ 8 լրացուցիչ չֆինանսավորված գիտահետազոտական թեմա,

որից 5-ը շարունակվում է:

- 2011թ.-ից «ՁՊՄԿ» ՓԲԸ-ի պատվերով եւ ֆինանսավորմամբ կատարվում է գիտահետազոտական նախագիծ՝ տարեկան 9 մլն դրամ ծավալով՝ «Մոլիբդենային հանքանյութի ֆլուտացման գործընթացի հավանականային կառավարման մասնակային մոդելի մշակումը» թեմայով:
- Հրատարակվել են 137 գիտական հոդված եւ 95 գիտաժողովի նյութեր:
- Մասնաճյուղի 1 դոցենտ պաշտ-

ԻՍՏԵՍՏՆԵՐ ԱՄԻՐՈՒՄ

ՍՈՒՐԵՆ ԽԱԶՍԻՐՅԱՆ

Սյունիքի մարզպետ



ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղը Սյունիքի մարզում կարեւոր առաքելություն ունի՝ պատրաստել բարձրակարգ, մեր ժամանակի պահանջներին համապատասխանող կադրեր: Այդ առաքելությունը, պետք է ասել, մասնաճյուղը կարողանում է կատարել պատասխանատվությամբ: Բայց մենք կրթության եւ գիտության նախարարության, մայր բուհի եւ մասնաճյուղի ղեկավարության հետ լուրջ անելիքներ ունենք դեռեւս: Մասնաճյուղը բոլոր չափանիշներով պետք է քայլի հանրապետության առաջավոր բուհերի շարքում, ինչի համար գրեթե բոլոր հիմքերը կան: Մասնաճյուղն ուսուցանվող մասնագիտությունների գծով պետք է տա ներկայիս պահանջներին համապատասխանող կադրեր: Հատկապես սերտ պետք է լինի հանքարդյունաբերական ձեռնարկությունների եւ մասնաճյուղի համագործակցությունը: Ցավով են նկատում, որ տնտեսավարող առանձին սուբյեկտներ երբեմն վերապահությամբ են մոտենում մասնաճյուղի շրջանավարտներին՝ կադրերի ընտրություն կատարելիս: Ցավով են նկատում նաեւ, որ լավագույն մասնագետների շատերը երբեմն գերադասում են մնալ մայրաքաղաքի բուհերում եւ չվերադառնալ հայրենի երկրամաս, իսկ մասնաճյուղը որոշ մասնագիտությունների գծով որակյալ դասախոսների կարիք ունի: Սրանք հարցեր են, որոնք մտածելու տեղիք են տալիս: Եվ, ընդհանրապես, մասնաճյուղի հիմնադրման 15-րդ տարեդարձը մնան հարցերի շուրջ խորհրդածելու լավագույն առիթն է: Մինչ այդ, սակայն, ես իմ անկեղծ շնորհավորանքն ու բարեմաղաքանքներն եմ հղում մասնաճյուղի կղեկավարին:

ԱՐՏՈՒՐ ԱՌԱՅԱՆ

Կապանի քաղաքապետ



Սեկուլեն տասնամյակ է, ինչ կապանյան իրականության մեջ իր պատվելի եւ հաստատուն տեղն ունի ՀՊՃՀ մասնաճյուղը: Այն ոչ միայն բարձրագույն ուսումնական հաստատություն է մեր քաղաքի ու տարածաշրջանի համար, այլեւ գիտական մտքի, մտավոր աշխատանքի, քաղաքացու եւ քաղաքացիական հասարակության ձեռավորման կենտրոն: Հաճելի է նկատել, որ հարյուրավոր երիտասարդներ, բարձրագույն կրթություն ստանալով այդտեղ, շարունակում են մնալ Կապանում եւ վաղվա օրվա իրենց ծրագրերը կապում հայրենի բնօրրանի հետ: Հաճելի է նաեւ նկատել, որ մասնաճյուղը փորձում է ուսուցանվող մասնագիտությունները համապատասխանեցնել տարածաշրջանի տնտեսության պահանջներին եւ տնտեսավարող սուբյեկտներին առաջարկել արդի պահանջներին համապատասխանող, բարձրորակ կադրեր: Կարծում եմ, միաժամանակ, որ Կապանում կա մասնաճյուղի դերի, նշանակության ճիշտ գիտակցում: Եվ քաղաքային իշխանությունը ձգտում է (ու կծգտի) հնարավորինս զորավիզ լինել կրթությանը՝ իր առջեւ ծառայած խնդիրները լուծելու գործում:

Շնորհավորում եմ մասնաճյուղի դասախոսական ու ուսանողական անձնակազմին՝ հաստատության հիմնադրման 15-ամյակի կապակցությամբ, մաղթում բոլորին հաջողություններ՝ մեր երկրի համար որակյալ կադրերի պատրաստման, մեր սիրելի Կապանի սոցիալ-տնտեսական զարգացման միջավայրում:

ՄԱՔՍԻՍ ՀԱԿՈՒՅԱՆ

«Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ տնօրեն



ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի հիմնադրման 15-ամյակի առիթով ջերմ ու անկեղծ բարեմաղաքանքներ եմ հղում մասնաճյուղի պարտադրական կազմին, աշխատակիցներին, ուսանողներին, ուսանողությանը, հազարից ավելի շրջանավարտներին եւ մասնաճյուղի ստեղծմանն ու զարգացմանն աջակցած կազմակերպություններին:

Մասնաճյուղը ստեղծվեց ժամանակի հրամայականով՝ պատերազմից քայքայված ու նախկին տնտեսական կապերից զրկված, նոր-նոր ոտքի կանգնող Սյունիքի տնտեսությունը, հատկապես հանքարդյունաբերությունը ճարտարագիտական կադրերով համալրելու, երիտասարդության արտագաղթը կանխելու ռազմավարական նպատակներով:

Մասնաճյուղի առաքելությունն էլ ավելի կարեւորվեց մարզի հանքարդյունաբերության ձեռնարկությունների մասնավորեցման արդյունքում՝ ժամանակակից տեխնիկայով վերագինվող կոմբինատները միջազգային չափանիշներին համապատասխանող բարձրորակ մասնագետներով ապահովելու անհրաժեշտությամբ:

Դրված նպատակին հասնելու համար դեռեւս 1997թ. սկիզբ առած համալսարան-արդյունաբերություն համագործակցությունը միայն ուսումնական ոլորտում բավարար չէ: Ուստի մեր ընկերության նախաձեռնությամբ սկիզբ դրվեց համալսարան-արդյունաբերություն գիտատեխնիկական համագործակցությանը, ինչը հնարավորություն կընձեռնի էականորեն բարձրացնել պատրաստվող ճարտարագետների մակարդակը եւ մասնաճյուղի համար գիտական կարգեր պատրաստելու

հետ մեկտեղ լուծել կոմբինատում առկա գիտատեխնիկական խնդիրները: Լիախույս եմ, որ այս ոլորտում սկսված համագործակցությունը, որը, անշուշտ, լայն թափ կստանա, չափազանց կարեւոր է տարածաշրջանի զարգացման համար, քանի որ այն կստեղծի իրական նախադրյալներ Սյունիքը հունք մատակարարող մարզից աստիճանաբար գիտատեխնիկական եւ տեխնոլոգիական կենտրոնի վերափոխելու համար:

Բարի երթ մեր հայրենի կրթօջախին եւ լավագույն մաղաքանքներ ու հաջողություններ մասնաճյուղի ողջ հանրային:

ՎԱԶԵ ԵՓՐԵՄՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, ընդհանուր ճարտարագիտական կրթության ֆակուլտետի ղեկավար




Ինքը թեզ շնորհավորելը չափազանց բարդ բան է, եթե չասեն՝ մեծամիտ պահվածք: Ուրիշին, անգամ թշնամուն խոսք ուղղելը հասկանալի է:

Շնորհավորանքի առիթով տգետ ուրիշին կարող ես գեղազետ անվանել, անգետ ուրիշին՝ պատանաբան, հանցագործ ուրիշին՝ քաղաքական գործիչ, կուսակցությունից կուսակցություն անկեղծի տեղափոխվողին՝ զբոսաշրջիկ, երեխաների համար նախատեսված վերմիշելը լավողին՝ մանկավարժ եւ այսպես շարունակ ու անընդհատ: Անընդհատ հիմք տարին մեկ է ընդհատվում աննշան մեկ օրով՝ ընտրությունների օրով: Դա՛ հեջ, «Արի տուն» ծրագրով մեր տներում՝ կայտնվող սփյուռքահայերը կասեն՝ վազն անցիր...

Ինքը թեզ շնորհավորելը չափազանց բարդ բան է, բայց երբեմն պիտի անես՝ լուռ, աննկատ, մեկուսի, գոնե համոզ-



ՀՈՒՆԵՆՅԱՆ



Սանճառի շրջանավարտների թվաքանակի դինամիկան 1997-2011 թթ.

պանել է դոկտորական, իսկ 7 դասախոս՝ թեկնածուական ատենախոսություն, նրանցից 6-ին շնորհվել է դոցենտի գիտական կոչում:

- Ստեղծվել են 2 ֆակուլտետ, 5 ամբիոն, 5 լաբորատորիա, 2 տեխնոլոգիական կարողությամբ լաբորան, հեռավար ուսուցման լաբորան, վիրտուալ լաբորատորիա:
- Ձեռք են բերվել 53 ընծիվուբեր, 2 ինտերակտիվ (էլեկտրոնային) գրատախտակ և 3 լաբորային պրոյեկտոր:
- «ՁՊՄԿ» ՓԲԸ-ի միջոցով (շուրջ 80

մլն դրամ) հիմնանորոգվել են գլխավոր մասնաճյուղը և 2 այլ մասնաճյուղերի տանիքները, միջոցառումների դահլիճը, կառուցվել է գազաֆիկացված ջեռուցման համակարգ: 2007թ. ջրատարի վթարի հետևանքով լրջորեն վնասված գլխավոր մասնաճյուղը և մարզադահլիճը կրկին հիմնանորոգվել են «Հայքրոմոլոկոյուզի» ՓԲԸ-ի միջոցներով (46 մլն դրամ):

- Սանճառի շրջանավարտները (Tempus) նախագծերի կատարմանը, որոնց շրջանակներում մաս-

նաճյուղի 3 աշխատակից մասնագիտական վերապատրաստում է անցել արտերկրում, մասնաճյուղում ստեղծվել է արտադրական կապերի և ուսանողների առաջադասման աջակցման կենտրոն: Ներկայումս աշխատանքներ են տարվում Գերմանիայի Դաշնության Իլմենաուի համալսարանի հետ համատեղ հեռակապի արդիական միջոցների կիրառությամբ մասնաճյուղում տարածաշրջանային վերապատրաստման կենտրոն ստեղծելու ուղղությամբ:

Հիմնախնդիրները

Հանրակացարանի մասնաճյուղի հիմնանորոգում (1-ին և 2-րդ հարկերը) միջին մասնագիտական և նախնական (արհեստագործական) մասնագիտությունների գծով ուսումնառության կազմակերպման, իսկ 3-րդ և 4-րդ հարկերը՝ հանրակացարանի (պահանջվում է 100 մլն դրամ) համար: Ընդերքբաժնույթան լաբորատորիայի համալրումն ուսումնահետազոտական սարքավորումներով (պահանջվում է 80 մլն դրամ):

Գիտական կարգերի պատրաստում, երիտասարդ աստիճանակիր դասախոսների հավաքագրում և պահպանում մասնաճյուղում, աստիճանակիր դասախոսների մասնաբաժնի աճի ապահովում: Արտաբյուջետային միջոցների նոր աղբյուրների որոնում, մասնավորապես դրամաշնորհային և ֆինանսավորվող տնտեսականագրային հետազոտական նախագծերի ծավալների աճի ապահովում:

Ուսանողների մասնագիտական հետաքրքրասիրության և գրավչության ապահովում:

ՄԵՅՐԱՆ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ.
«Սովորելու համար հնարավոր բոլոր պայմանները կան մեր մասնաճյուղում...»

Սկզբը՝ էջ 5

րում է 407 ուսանող (189-ը՝ հեռակա): Մեր շրջանավարտների աշխատանք ունենալու խնդիրն ինձ անհանգստացնող գլխավոր հարցերից մեկն է: Մեզ այդ հարցում աջակցում է «Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն: Տարեկան նրանք ունենում են մոտավորապես 3-5 ճարտարագետի կարիք, բայց փոխարենը շատ են ունենում որակյալ բանվորների և օպերատորների պահանջ: Շատերը հպարտանում են, որ իրենց բուհն ունի 2000-2500 ուսանող: Ես կարծում եմ, որ այս պարագայում էական այն չէ, թե քանի ուսանող է սովորում տվյալ հաստատությունում, այլ այն, թե ինչ և ինչպես են սովորեցնում, ինչպիսի որակի մասնագետներ են պատրաստում և արդյոք նրանք աշխատանք են ունենալու բուհն ավարտելուց հետո: Մասնագետների պահանջարկը (մեր միջավայրում) շրջանավարտների ընդհանուր թվի 30-40 տոկոսն է կազմում այսօր, այնպես որ՝ խնդրի լուծումն այդքան էլ դյուրին չէ:

տնօրեն Մաքսիմ Հակոբյանը:
– Վերջերս բուհում կազմակերպվել է նաև միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսումնառություն, ի՞նչ նպատակներ ունեք այդ առումով, չէ՞ որ քայլը, ինքնուրույն, անմասնաճյուղային է:
– Դա մեր բուհի համար իսկապես անմասնաճյուղային էրեւոյթ է: Երկու տարի տեւեց, որ կարողացանք դրա համար նախապայմաններ ստեղծել: Ասեմ նաև, որ դա կատարվել է «Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի տնօրենի աջակցությամբ: Շատերը բարձրագույն կրթություն ստանալուց հետո չեն համաձայնում բանվորի կամ օպերատորի կազմակերպմանը, ինչի պահանջարկը կա, ինչը կարելի է լուծել միջին մասնագիտական ծրագրերով կարգերի պատրաստմամբ: Առայժմ ունենք երկու բաժին՝ օգտակար համաժողովրդական ու հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում: Դրանցում սովորում է 16 ուսանող, ովքեր հետագայում, ցանկության դեպքում, հնարավորություն կունենան դառնալ ՀՀ-ի ուսանող կամ աշխատանքի կընդունվեն Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում:
– Ձե՞ք կարծում, որ այսօր Դուք հայտնվել եք լուրջ մրցակցային ռաշտում: Այս տարվանից, եթե չենք սխալվում, ընդունելության պայմանները նույնացվել են և՛ պետական, և՛ մասնավոր բուհերի համար: Կարծե՞ք ԿԳ նախարարը փորձում է բոլորին բերել հավասար ելման կետ: Ավելացել է նաև միջին մասնագիտական, բարձրագույն ուսումնական հաստատությունների թիվը: Կարողա՞մք եք դիմակայել մրցակցությանը:
– Տարածաշրջանում գործող բուհերի մեծ մասը հումանիտար ուղղվածություն ունի: Բացի այդ, դիմորդն է, ի վերջո, որոշում, թե որ բուհ դիմի, որտեղ ստանա կրթություն: Եվ, թույլ տվեք ասել, դիմորդներն ավելի շատ մեր կրթության են նախընտրում (վերջին տարիների փորձն է ցույց տալիս): Դրան նպաստում է նաև մեր՝ մայր բուհի հետ սերտ համագործակցության հանգամանքը, ինչը կատարվում է օԶ-լայն տարբերակով: Իսկ ի՞նչ չափանիշներով են առաջնորդվում դիմորդները: Առաջին հերթին, կարծում եմ, դիմորդն իրեն հարց է տալիս՝ ինչի՞ համար է բուհ գնում, հետագայում որտե՞ղ է աշխատելու: Եթե նախընտրում է հանքարդյունաբերության ոլորտը, ապա գալիս է մեզ մոտ սովորելու: Կան ծնողներ, որոնց համար կարելի է աջակցում է «ՁՊՄԿ» ՓԲԸ

վելու, որ տգետ ուրիշի, անգետ ուրիշի, հանցագործ ուրիշի, զբոսաշրջիկ ուրիշի, վերմիշել լափող ուրիշի և քո միջև տարբերություն կա, ահաբեկ անդունդի չափ տարբերություն: Հիմա թվարկված ու հիշողության մեջ շարվող ուրիշներով բնակեցված ես «տվյալ, անվարտիք քաղաքում» մեր բուհն ի սկզբանե ընդունեց Արշակավանի ներսուղորդը և դռնբաց ընդունեց այն քչերին, որոնց հակացուցված էր արդեն թվարկված և հիշողության մեջ շարվող ուրիշ լինելը, ասել է թե այս քչերն ոչ թե ուզում էին ազատ ապրել, այլ իսկապես ազատ էին, ոչ թե ուզում էին ձեռքները սերտ աշխատանք, այլ իրոք սիրում էին աշխատել, ոչ թե փորձում էին երեւալ մերձգիտական խմբակարգներում, այլ իրավ գիտության կրողն էին: Փառք Աստուծո, այդ քչերն առաջին օրվանից մինչև այս պահը չեն լքել մեր ինքնատիպ Արշակավանը, և վերջինս էլ, ի տարբերություն պատմական Արշակավանի, դեռևս չի ավերվել (չեն ավերել), քանի որ արշակավանցիները շարունակում են ազատ ապրել, ազատ աշխատել, ազատ սիրել, իրոք գիտության կրողը լինել: Հավատանք մեր ազատ կենսակերպին և այնպես ենք մենք, որ ոչ մի հարամի չկարողանա մոտենալ մեր պարիսպներին, անգամ մտքում չծածած մի մեր Քաղաքը փլելու քաղաքակառուցված ամմիտ ծրագրեր...
Խուլի՛ր Կորտասարն է ասել. «Լավ է լինել ոչինչ այն քաղաքում, որն ամեն ինչ է, քան լինել ամեն ինչ մի քաղաքում, որը ոչինչ է»: Ես սրա մասին եմ խոսում, ես այս բարձունքից եմ շնորհավորում իմ սիրելի գործընկեր-արշակավանցիներին:

բոլոր այն մարդկանց, այն աշխատակիցներին, ովքեր կապված են եղել և են այս բուհի կայացման 15-ամյա ուղու հետ:
Շնորհակալ եմ ձեր լինելության համար:
Փորձեմ պատկերավոր ներկայացնել ասելիքս՝ դիմելով մեծն եղիշե Չարենցի օգնությանը:
Ո՞վ կտա ինձ գիտելիք, Ո՞վ կտա աչքեր, Որ պարզ մայեմ աշխարհին, Հպարտ ու անահ: -
Որ չլինեն ես գերի, Չլինեն անգետ, Եվ սիրտս միշտ ե՛լ բարի, Ե՛վ արի մնա...
Ուզում եմ, որ հայոց բանաստեղծի այս խոսքերը ձեր յուրաքանչյուր շրջանավարտի մշտական ուղեկիցը լինի՝ նրա լուսավոր գալիքում:
15 տարին բուհի համար իրաքջ արարման սկիզբն է, և դեռ առջեւում են նորանոր դժվարություններն ու հաղթանակները, ուրեմն՝ բարի երթ, սիրելի կրթօջախ:
Եվ վերջում մեկ փոքրիկ լրացում՝ նվիրված իմ եղբոր՝ Հոնթեր Մուշեղի Աբրահամյանի՝ ՀԴՃ-ի Կապանի մասնաճյուղում իրականացրած գործունեությանը՝ հպարտ եմ մասնաճյուղի այդ սկզբի համար...
ՄԱՐԻԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀԴՃ-ի Կապանի մասնաճյուղի ուսխորհրդի նախագահ

ուսանողական միջավայր, ձեւավորվեցին մինչ այդ գոյություն չունեցող փոխհարաբերություններ: Բացի դրանից, սոցիալապես անապահով ընտանիքի երեխաները հնարավորություն ստացան բարձրագույն կրթություն ստանալ տեղում՝ իրենց ծնողներից ազատելով հոգսերի ավելորդ բեռից: Բուհում հմտանում են «Մետալուրգիա և նյութագիտություն» մասնագիտության մեջ: Շուտով հրաժեշտ կտան հարազատ կրթօջախի և գիտելիքները, որ ստացել են, իմ մեջ ցանկություն են առաջացրել ուսումնա շարունակել մագիստրատուրայում: Պիտի ասեմ, որ նաև բուհի ուսխորհրդի նախագահն եմ, ինչը հնարավորություն է ընձեռել լինելու իրադարձությունների կենտրոնում, շոշափել ուսանողական կյանքի զարկերակը: Մասնակցել եմ «Բազե-2011» ուսանողական-երիտասարդական հավաքին, պիտի խոստովանեմ, որ մեր բուհի ուսանողների հետ շփումը ինձ բերել է այն համոզման, որ նրանց մեջ պակասում է ակտիվությունը, ասես թմբիկի մեջ լինեմ: Բայց գրավիչն այն է, որ միջոցառումից միջոցառում ակտիվանում են, անտարբերությունը տեղի է տալիս, և զգացվում է, որ փոխվում է նրանց մտածելակերպը, փորձում են իրենց հուզող հարցերով դիմել ուսխորհրդին: Կցանկանայի, որ իմ տարեկիցները բուհն ավարտելուց հետո աշխատեն իրենց մասնագիտությամբ, իսկ մինչ այդ բուհում ուսանելիս ավելի խորապես ուսումնասիրեն և հմտանան դրա մեջ:

ՀԱՍՄԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
Կապանի N1 հիմնական դպրոցի փոփոխ

Մեր քաղաքի առաջնել ու սիրելի բուհը դարձավ 15 տարեկան: Շնորհավորում և ապագա բեղմնավոր գործունեություն են ցանկանում

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը բոլորեց իր գոյության 15-ամյակը, և նրա անցած ճանապարհի ամենամեծ ձեռքբերումը համարում են այն, որ նրա հիմնադրումով մեր քաղաքում ստեղծվեց



Ընդերքաբանության և մեթալուրգիայի ամբիոնի հերթական նիստը:

ՄԵՅՐԱՆ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ. «Սովորելու համար հնարավոր բոլոր պայմանները կան մեր մասնաճյուղում...»

Սկզբը՝ էջ 7

Մանուկ ուսման վճարի չափը: Մեզ մոտ ուսման վճարը մայր բուհից ավելի ցածր է, դա էլ նշանակություն ունի:

– Մարզում, կարծեք, ինչ-որ վերապահում կա տեղական բուհերի շրջանավարտների նկատմամբ: Դա նկատել ենք հատկապես «Դիմո գոլդ մայնինգ քամփին» ՓԲԸ-ում, երբ խոսք է բացվել Ձեր շրջանավարտների մասին: Դուք զգո՞ւմ եք գործատուների այդ զգուշավորությունը:

– Դա նկատելի է հատկապես «Դիմո գոլդ մայնինգ քամփին» հետ ունեցած հարաբերություններում: Այդ ձեռնարկության հետ մեր համագործակցությունը ոչ միշտ է ստացվում, նույնիսկ ուսանողներին այնտեղ արտադրական պրակտիկայի չեն ընդունում: Իսկ ՋՊՄԿ-ն, այդ առումով, ոչ մի խնդիր չի հարուցում, ընդհակառակը՝ բարձր արդյունավետությամբ կազմակերպում է ուսանողների արտադրական պրակտիկան եւ այդ ընթացքում նրանց ապահովում վճարովի աշխատանքով:

– Դասախոսական կարգերի խնդիրն մենք հպանցիկ անդրադարձանք: Ի՞նչ որակներ պետք է ունենա մասնագետը, որպեսզի ՀԴՃՀ Կապանի մասնաճյուղում դասախոս աշխատի:

– Դասախոս աշխատելու համար հաշվի ենք առնում մախ մասնագիտական կրթությունը (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա), ինչպես եւ գիտական աստիճանը, դասախոսական աշխատանքի փորձը, կարողությունները, մանկավարժական հմտությունները: Իմ պաշտոնավարման առաջին տարում 125 ուսանող ունեցեք, 11 դասախոս, որոնցից միայն երկուսն ուներ գիտական աստիճան: Այսօր ունենք գիտության 10 թեկնածու եւ դոկտոր: Տնտեսագիտական մասնագիտության գծով գիտության թեկնա-



ՀԴՃՀ Կապանի մասնաճյուղի ուսխորհուրդը աշխատանքային հերթական ծրագիրը քննարկելիս:



ծու չունենք, ամբիոնի վարիչը ՀԴՃՀ Երեւանի կրթահամալիրից է, ինչորմացիոն տեխնոլոգիաների գծով միակ գիտական աստիճան ունեցողն է: Գաղտնիք չէ, որ լավագույն մասնագետներն այսօր ծագում են աշխատել մայրաքաղաքում, որտեղ առաջընթացի հնարավորություններն ավելի շատ են: Գիտական աստիճան ունեցող դասախոսների պակասի պատճառով մեզ չթույլատրեցին մագիստրատուրա բացել: Այդուհանդերձ, ինչպես նկատեցիք բերված թվերից, մեր դասախոսական անձնակազմը որակական զգալի աճ է ունեցել անցած տարիներին:

– Մեր կրթական համակարգում, ինչքան էլ ցավալի է, կոռուպցիա ասվածը գոյություն ունի, ինչը խստովանում են անգամ պետական այրերը: Ի՞նչ քայլեր եք ձեռնարկում այդ երեւույթը կանխելու կամ նվազագույնի հասցնելու համար:

– Այս հարցում մեզ աջակցում են նաեւ ուսանողները: Հաճախ ենք անանում սոցիոլոգիական հարցումներ անցկացնում ուսանողների շրջանում: Իսկ եթե ուսանողը, ինչ-ինչ պատճառներից ելնելով, ճշմարտությունը չի ասում, ապա մեր կողմից ձեռնարկված քայլերը ցանկալի արդյունք չեն տալիս: Նշենք, որ այդ կարգի հարցումների շնորհիվ սկզբնական շրջանում շատ դասախոսներ դուրս մնացին: Բայց մենք չենք բավարարվում հարցումներ անելով եւ ավելի շատ երեւույթների կանխարգելմամբ ենք զբաղվում: Այդպիսի մի քայլ էլ դասախոսների

աշխատավարձի բարձրացումն էր:

– Հետաքրքիր է, ի՞նչ աշխատանք է կատարվում առարկայական ծրագրերի մշակման ուղղությամբ մասնաճյուղում, կարողանո՞ւմ եք գիտության եւ տեխնիկայի հարաճուն զարգացման մեր օրերում ապահովել ուսումնական ծրագրերի արդիականությունը:

– Մասնաճյուղում չէ, որ առարկայական ծրագրերը մշակվում են, հիմնականում դա արվում է մայր բուհում: Մենք էլ, բնականաբար, մեր

Տնօրեն Ս.Բալասանյանը մասնաճյուղի հեռակա ուսուցման բաժանմունքի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու Անահիդ Այվազյանի եւ ՄԿԿ ֆակուլտետի դեկան, փ.գ.թ., դոցենտ Անի Եղիազարյանի հետ ամփոփում է ձմեռային քննաշրջանի արդյունքները:

առաջարկությունները, նկատառումներն ենք ներկայացնում:

– Իսկ գիտական աշխատանք... – Երկար տարիներ է, ինչ մասնաճյուղում թեկնածուական եւ դոկտորական ատենախոսությունների շրջանակում կատարվում են գիտատեխնիկական աշխատանքներ: Իմ ղեկավարությամբ գործում է գիտական խումբ, որը կատարել է կատարում է գիտական աշխատանքներ ՋՊՄԿ-ի պատվերով ու ֆինանսավորմամբ՝ տարեկան 9 մլն դրամ ծավալով՝ «Մոլիբդենային հանքանյութի ֆլուտացման գործընթացի հավանականային կառավարման մանակային մոդելի մշակումը» թեմայով: Հենց նման համագործակցության արդյունքում է հնարավոր դառնալ այդ ոլորտի կատարյալ մասնագետ: Նշեն նաեւ, որ մեր կատարած բոլոր աշխատանքների արդյունքները հրատարակում ենք գիտական հանդեսներում եւ գիտատեխնիկական առաջընթացի համահունչ քայլերը մեր օրերում շատ հրատապ հարց է, եւ դասախոսները պետք է տեղյակ լինեն ոլորտի նորություններին:

– Ինչպե՞ս է իրականացվում դասախոսների վերապատրաստումը, չէ՞ որ, ինչպես արդեն նշեցիք, գիտատեխնիկական առաջընթացին համահունչ քայլերը մեր օրերում շատ հրատապ հարց է, եւ դասախոսները պետք է տեղյակ լինեն ոլորտի նորություններին:

– Հինգ տարին մեկ դասախոսները պետք է պարտադիր վերապատրաստման դասընթացներ անցնեն՝ անկախ գիտական աստիճանից: Մայր բուհն ունի դասախոսների կատարելագործման կենտրոն, որտեղ նրանք վերապատրաստվում են նոր մասնագիտությունների գծով: Շատ կարեւոր են համարում նաեւ դասախոսների ինքնակրթությունը, ինչին մեծապես նպաստում է մասնաճյուղում գործող բարձրորակ ինտերնետային կապը: Իսկապես, դասախոսը պետք է իրագրել լինի իր ոլորտի առաջընթացին, այլապես կյանքը նրան դուրս կմղի:

– Այսօր Սյունիքի մարզի առաջնային խնդիրներից մեկը, եթե ոչ անենառաջնայինը, բնապահպանությունն է, իսկ Ձեր մասնաճյուղն այդ ուղղությամբ կարող է չի պատրաստում...:

– Իհարկե, ճիշտ կլինի, որ մենք մասնագետներ պատրաստելիք այդ ուղղությամբ, ինչի կարիքը կա, ինչի վերաբերյալ ծրագրեր ունենք: Բայց այսօր, ցավոք, համապատասխան դասախոսական կարգեր չունենք: Փոխարենը՝ բնապահպանությունը, որպես առարկա, դասավանդվում է մասնաճյուղի բոլոր բաժիններում: Ամեն դեպքում Ձեր բարձրագրած հարցը հրատապ է, եւ մենք անելիք ունենք այդ ուղղությամբ:

– Պարոն Բալասանյան, իսկ ինչպե՞ս եք պատկերացնում մասնաճյուղի վաղվա օրը:

– Այսօր հանրապետության մասշտաբով գլոբալ խնդիր է դարձել ուսման նկատմամբ անտարբերության աճը, որի դեմն առնելու համար պետք է որոշակի քայլեր ձեռնարկել՝ սկսած նախակրթարանից, հանրակրթական դպրոցից, ինչն առաջին չի արվում: Մինչդեռ, իմ կարծիքով, համապատասխան առաջադիմություն չունեցող կրթությունից խուսափող ուսանողը պետք է դուրս մնա բուհից: Ուրեմն՝ վաղվա օրվա մասին խոսելիս մենք պետք է նախաեսառաջ փոխենք ուսման նկատմամբ վերաբերմունքը կրթական համակարգի բոլոր աստիճաններում: Լավ կրթությունը, լավ մասնագետը, խորը գիտելիքներ ունեցող կարգերը պետք է պահանջված լինեն մեր կյանքի բոլոր ոլորտներում, այլապես կրթության համակարգի ներկայիս խնդիրները դեռ երկար ժամանակ չեն նահանջելու:

Հարցազրույցը ՋՐԻՆԵ ՀԱՄԱՐԱԶՈՒՄՅԱՆԻ